

ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Հինգշաբթի, 4 Յունուարին, Դամասկոսի մէջ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան Շէյխ Հասան Ախթարին այցելութիւն տուաւ Դամասկոսի հայոց Ազգ. Առաջնորդարան: Բարձրաստիճան հիւրին կընկերանային դեսպանութեան առաջին քարտուղարն ու խորհրդականը: Շէյխ Ախթարիին ընդունեց Դամասկոսի հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպս. Նալպանտեանը:

Այս այցելութեամբ Շէյխ Ախթարին շնորհաւորեց Սրբազան Հայրը Ամանորեայ եւ Սուրբ Ծննդեան տօներուն առթիւ՝ փոխանցելով նաեւ Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահի բարեմաղթութիւնները: Այցելութեան ընթացքին Դեսպանն ու Առաջնորդ Հայրը զրուցեցին տարածաշրջանի խնդիրներու, Սուրիոյ եւ Իրանի հայ համայնքներու գործունէութեան եւ անոնց ներդրումներուն, ինչպէս նաեւ Սուրիա-Պարսկաստան-Հայաստան յարաբերութիւններու մասին:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՊԱՇՏՕՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՀՈԳԻՈՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

19 Յունուարին, անմարդկային ոճիրի մը հետեւանքով, Թուրքիոյ մէջ հայկական «Ակօս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքի սպանութիւնը ցնցեց դամասկահայութիւնը: Ողբերգական այս տխուր առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ Հայց. Եկեղեցւոյ բոլոր թեմերուն մէջ նոյն օրը կատարուեցան հոգեհանգստեան արարողութիւններ եւ աղօթքներ: Դամասկոսի մէջ ՀՀ դեսպանութեան եւ Դամասկոսի հայոց Առաջնորդութեան խնդրանքով Դամասկոսի հայոց Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն: Արարողութեանը, զոր նախագահեց Դամասկոսի հայոց առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալպանտեանը, ներկայ էին ՀՀ դեսպանութեան առաջին քարտուղար տիար Կարէն Գրիգորեանը եւ դամասկահայ հաւատացեալներ:

Առաջնորդ Սրբազան Հայրը յաւուր պատշաճի իր պատգամին մէջ անդրադարձաւ Հրանդ Տինքի կենսագրականին, անոր տարած կարեւոր աշխատանքին, քննադատելով ոճրագործն ու անոր ետին պատասխանատուները: Սրբազան Հայրը խօսքը արարտեց ըսելով. «Ճշմարտութեան ձայնը ոչ ոք կրնայ լռեցնել»:

Յաւարտ Սուրբ Պատարագի հաւատացեալներ իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Սրբազան Հօր: Առաջնորդ Հայրը իր հերթին յատուկ զրուցեամբ ցաւակցական նամակ ղրկեց Հրանդ Տինքի այրիին, հարազատներուն եւ «Ակօս» թերթի խմբագրութեան:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

ԴԻԻԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ